

3. Храбовченко В.В Экологический туризм, Москва, 2004, 262 с.
4. Hawkins K. & D. Ecotourism: A Guide for Planners and Managers, Bennington, 2001, 175 p.
5. Holden A. Tourism Studies and the Social Sciences, London, 2005, 241 p.
6. Honey M. Ecotourism and Sustainable Development: Who owns paradise? Washington, 1999, 405 p.

THE ESSENTIALS OF ECOTOURISM AND ITS GEOGRAPHICAL PECULIARITIES  
OF DEVELOPMENT IN THE REPUBLIC OF ARMENIA

Petakchyan M.H.

Yerevan State University, Yerevan, Republic of Armenia, marina.petakchyan@ysu.am

ANNOTATION

This article analyzes and presents the essence of ecotourism from geographical point of view, the current state of ecotourism in Armenia and the geographical factors, which can affect on its development. It also introduces the relationship between geography and ecotourism. It is also suggested to create a platform for exchange of ideas and experience, to formulate a modern infrastructure of ecotourism in order to make its potential more accessible.

**ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀՀ ՄԱՐԶԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ  
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԻՔ**

**Մանասյան Գ. Ս.**

Եվրոպական համալսարան, Երևան, Հայաստանի Հանրապետություն gor\_manasyan@mail.ru

Տարածքային զարգացման առումով ՀՀ-ում առկա են միջաբք հիմնախնդիրներ, որոնք դրսևորվում են տարածքային ոչ համաչափ զարգացման ձևով: Տարածքային զարգացման անհամաչափությունները հիմնականում արտահայտվում են մայրաքաղաքում տնտեսության համակենտրոնացման, նրա տնտեսական դերի և նշանակության անընդհատ աճով, ինչի արդյունքում էլ ավելի է մեծանում Երևանի և մարզերի միջև բնակչության զբաղվածության և կենսամակարդակի ճեղքվածքը (Տիգրանյան, 2014): Այսպես, հանրապետության բնակչության 64%-ն ապրում է մարզերում (2017 թ. հունվարի 1-ի դրությամբ), որի փոխարեն ՀՀ-ի համայնքներին բաժին է հասնում ՀՆԱ-ի չնչին մասը:

Այդուհանդերձ, ՀՀ-ի նման բնական պաշարներով աղքատ և տարածքով փոքր երկրի համար տնտեսության ու դրա ենթակառուցվածքների ապակենտրոնացումը, համայնքների համաչափ և կայուն զարգացումը, անկասկած, հրատապ հիմնախնդիր է: Իսկ դրա լուծման ուղիներից մեկը զբոսաշրջության ոլորտի զարգացումն է, որը հանդիսանում է խթան ամբողջ տնտեսության և նրա ենթակառուցվածքների զարգացման համար:

Զբոսաշրջությունը հանդիսանալով տնտեսության բարդ և համապարփակ բնագավառ, մեծ ազդեցություն ունի ինչպես երկրի տնտեսության կառուցվածքի և ընդհանուր իրավիճակի, այնպես էլ հանրապետության մարզերի և համայնքների տնտեսությունների վրա:

Ներկայումս զբոսաշրջությունն առաջատար տեղ է զբաղեցնում ապրանքների և ծառայությունների համաշխարհային արտահանման ծավալում: Զբոսաշրջային այցելությունների քանակին զուգահեռ աճում են նաև դրանից ստացվող եկամուտները՝ գերազանցելով այլ ապրանքներին և ծառայություններին: Ըստ կանխատեսումների՝ 2020 թ. համաշխարհային եկամուտները զբոսաշրջությունից կկազմեն 2 տրլ. դոլար:

Վիճակագրական տվյալները փաստում են, որ զբոսաշրջության մասնաբաժինը ներդրումների ընդհանուր ծավալում կազմում է մոտ 7%, համաշխարհային սպառողական ծախսերի 11%-ը, բոլոր հարկային մուտքերի 5%-ը և համաշխարհային ծառայությունների առևտրի 1/3-ը: Զբոսաշրջությունն աշխատանքով է ապահովում մոտ 250 մլն. մարդու, յուրաքանչյուր 10-րդ աշխատողն աշխարհում զբաղված է զբոսաշրջության ոլորտում:

Զբոսաշրջության զարգացումը նպաստում է տնտեսության համալիր զարգացմանը, շրջակա միջավայրի պահպանությանը, աղքատության հաղթահարմանը, պատմամշակութային ժառանգության և ավանդույթների պահպանությանն ու զարգացմանը, մշակութային արժեքների փոխադարձ արժևորմանը և այլն:

Մարզերի և համայնքների տնտեսության վրա զբոսաշրջությունը կունենա դրական ազդեցություն միայն այն ժամանակ, երբ այն զարգանա ներդաշնակ տնտեսության մյուս բոլոր ճյուղերի (արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի, որակյալ ծառայությունների և սպասարկման, հյուրընկալման և հյուրանոցային, սննդի սպասարկման, զվարճանքի և ժամանցային ձեռնարկությունների) հետ միասին:

Զբոսաշրջությունը մարզերի և համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման տեսանկյունից ունենում է ազդեցության երեք հիմնական կողմ (Гостева, 2008, Виноградова, 2010).

1. *Ուղղակի ազդեցություն:* Այն ձևավորվում է զբոսաշրջիկների կողմից զբոսաշրջային ծառայությունների և ապրանքների ձեռք բերման վրա կատարած ծախսերով:
2. *Անուղղակի ազդեցություն:* Այն ձևավորվում է զբոսաշրջիկների կողմից հյուրանոցների ամրագրման, առևտրային գործառնությունների, տուրիստական գործակալությունների առք ու վաճառքից ստացված շահույթի, ապրանքներ մատակարարողների եւ այլնի վրա կատարված ծախսերով:
3. *Խթանիչ ազդեցություն:* Զբոսաշրջության զարգացումը և դրանով ձևավորված եկամուտները խթանում են մակրոտնտեսական ցուցանիշների բարելավմանը և տնտեսության ենթահամակարգերի զարգացմանը: Այլ կերպ

ասած, զբոսաշրջային ծախսերի միջոցով ձևավորվում է զբոսաշրջության ոլորտի աշխատակիցների եկամուտները, նպաստում է տրանսպորտի, գյուղատնտեսության, արդյունաբերության զարգացմանը:

Փաստորեն, զբոսաշրջությունը կարող է տնտեսական բազմապատկիչի ազդեցություն ունենալ մարզերի և համայնքերի ողջ սոցիալ-տնտեսական համալիրի զարգացման և ազգաբնակչության կենսամակարդակի բարձրացման և զբաղվածության ապահովման համար:

Այս մասին փաստում է նաև վիճակագրական տեղեկատվությունը: Քանի որ ՀՆԱ-ի փոփոխությունները էապես կորելացված են գործազրկության և զբաղվածության մակարդակի հետ, հետևաբար ուսումնասիրել ենք մակրոտնտեսական ցուցանիշների, մասնավորապես ՀՆԱ-ի և տնտեսական ակտիվության ազդեցությունը զբաղվածության ցուցանիշների վրա: Այսպես, վիճակագրական տվյալները փաստում են այն մասին, որ գյուղատնտեսական և արդյունաբերական աշխատանքներում զբաղվածների ներգրավվածության չափերը գնալով նվազում են: 2012-2016թթ. նվազման տարեկան միջին տեմպը կազմել է 3.1%: Զբաղվածների հիմնական մասնաբաժինը կենտրոնացած է ծառայությունների ոլորտում, որտեղ աճի միտումը դրական է, չհաշված 2015թ.-ին՝ 2014թ.-ի համեմատ արձանագրված 9.9% նվազումը: 2016թ.-ին զբաղվածների կեսից ավելին (50.5%) ներգրավված են ծառայությունների ոլորտում, ընդ որում, 2015թ.-ի համեմատ ծառայությունների ոլորտում ներգրավվածների թիվն ավելացել է 2.9%-ով (<http://www.armstat.am>): Ծառայությունների ոլորտում զբաղվածության նման աճի տեմպերը կապված են նաև զբոսաշրջության ծառայությունների նկատմամբ աճող պահանջարկով, որն էլ դրականորեն կանդրադառնա ազգաբնակչության կենսամակարդակի վրա:

Վերջին տարիներին, շնորհիվ զբոսաշրջության ոլորտում վարվող նպատակային պետական քաղաքականության, ինչպես նաև շահագրգիռ կողմերի՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր հատվածի և բնակչության համագործակցության, զբոսաշրջությունը ՀՀ-ում արձանագրում է այցելուների թվի դինամիկ աճ: Համաձայն ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2013-ին ՀՀ է ժամանել 1 մլն 84.188 միջազգային զբոսաշրջիկ՝ 12,6 %-ով ավելի, քան 2012 թվականի նույն ժամանակահատվածում: 2014 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ է այցելել 941.151 զբոսաշրջիկ՝ 13,6 %-ով ավելի, քան՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում: 2015-ին ՀՀ այցելել է 1 մլն 192 հազար զբոսաշրջիկ: 2014-ին այդ թիվը եղել է 1 մլն 203.000: 2016-ի հունվար-մարտին զբոսաշրջության նպատակով ՀՀ-ից մեկնել է 227.499 մարդ, ինչը 2015-ի առաջին եռամսյակի համեմատ 5.9%-ով ավելի է (<http://www.armstat.am>):

2016-ի առաջին եռամսյակում ՀՀ է ժամանել 252.506 զբոսաշրջիկ: Այս ցուցանիշը 2015-ի նույն ժամանակաշրջանի նկատմամբ աճել է 8.6%-ով:

2000-2016 թվականների ընթացքում ՀՀ այցելած ներգնա զբոսաշրջիկների թիվն ավելացել է ավելի քան 25 անգամ: Ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների 2017 թ. հունվար-հունիս

ամիսներին հանրապետություն է ժամանել 1 մլն 622 381 օտարերկրացի քաղաքացի: Արձանագրված ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճել է 24.2%-ով (<http://www.armstat.am>):

Հաշվետու ժամանակահատվածում աճել են նաև ներքին զբոսաշրջային հոսքերը, որի մասին փաստում են հյուրանոցային տնտեսություններից ստացված տվյալները: Այսպես, 2016թ. հունվար-դեկտեմբերին ՀՀ տարածքում հյուրանոցային տնտեսության օբյեկտներում տեղաբաշխված զբոսաշրջիկների թվաքանակը կազմել է 979 968 մարդ (ՀՀ ռեզիդենտներ), ինչը 2015թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ աճել է 12.4%-ով:

Չնայած որ, զբոսաշրջային և ռեկրեացիոն ռեսուրսները կենտրոնացված են մարզերում, ՀՀ զբոսաշրջության բնագավառում ևս նկատվում է համակենտրոնացում և բևեռացում, որը երևում է աղյուսակի 1-ի տվյալներից:

*Աղյուսակ 1: ՀՀ ՀՆԱ-ի կառուցվածքում ծառայությունների մասնաբաժինն ըստ մարզերի և Երևանի (2017թ.)*

| <i>N</i> | <i>Մարզի անվանումը</i> | <i>Մասնաբաժինը (%-ով)</i> |
|----------|------------------------|---------------------------|
| 1        | Երևան                  | 90.9                      |
| 2        | Արագածոտն              | 0.4                       |
| 3        | Արարատ                 | 0.8                       |
| 4        | Արմավիր                | 0.8                       |
| 5        | Գեղարքունիք            | 0.7                       |
| 6        | Լոռի                   | 1.4                       |
| 7        | Կոտայք                 | 1.6                       |
| 8        | Շիրակ                  | 1.9                       |
| 9        | Սյունիք                | 0.8                       |
| 10       | Վայոց Ձոր              | 0.3                       |
| 11       | Տավուշ                 | 0.4                       |

Այսպիսով, զբոսաշրջությունը, որպես համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման գործիք, դրսևորվում է նպատակային հետևյալ կողմերով.

1. ՀՀ համայնքների սոցիալ-տնտեսական կայուն զարգացում, այդ թվում՝ զբոսաշրջության:
2. Համայնքների տնտեսական ենթակառուցվածքների փոխկապակցված և ներդաշնակ զարգացում:
3. Համայնքների սոցիալական և մշակութային արժեհամակարգի վրա զբոսաշրջության բացասական ներգործությունների սահմանափակում:
4. Մարզերի և համայնքների բնապահպանական հիմնախնդիրների կարգավորում և կառավարում, այդ թվում զբոսաշրջությունից ստացված եկամուտների հաշվին:

Վերոհիշյալ նպատակների իրագործումը ենթադրում է բարդ և փոխկապակցված գործընթացների իրականացման շղթա: Այն իր մեջ ներառում է հետևյալ խնդիրների լուծումը՝

1. Մարզերի և համայնքների զբոսաշրջային և ռեկրեացիոն ռեսուրսների գնահատում և ռացիոնալ կառավարում:
2. Ջրոսաշրջային ենթակառուցվածքների ներուժի գնահատում և դրանց զարգացում:
3. Ջրոսաշրջային ծառայությունների որակի բարձրացում համայնքներում:
4. Տեղի բնակչության կրթության կազմակերպում և տեղեկատվության տարածում զբոսաշրջության և դրա դերի վերաբյալ:
5. Տեղի բնակչության անմիջական մասնակցություն զբոսաշրջային ծառայությունների մատուցման ոլորտում:
6. Տեղեկատվական կենտրոնների և դրանց ցանցի ձևավորում, մարզերի գրավչությունների ներկայացում և տարածում:
7. Պետական և ինքնակառավարման մարմինների անմիջական մասնակցություն և աջակցություն համայնքների զբոսաշրջության զարգացման համար:
8. Բարենպաստ օրենսդրական դաշտի և հարկային բեռի նվազեցում համայնքներում զբոսաշրջության խթանման համար:

#### **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Տիգրանյան Ի.Տ. Երևան քաղաքի և ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնահիմնքները/ Ծրագրի գիտական ղեկավար՝ Ի.Տ. Տիգրանյան, Կատարողներ՝ Ք.Ջ. Վարդանյան, Գ.Ա. Ավագյան, Կ.Հ. Գրիգորյան, Վ.Ի. Տիգրանյան.- Եր.: Տնտեսագետ հրատարակչություն, 2014.-80 էջ:
2. Гостева Л.Ф. Туризм как фактор экономического развития региона: Региональная экономика: теория и практика: 15 (72), –М. 2008
3. Виноградова М. В. Социально-экономическое влияние развития регионального туристского комплекса на экономику региона: сервис в России и за рубежом. 2010.-№1.-С. 132-140.
4. <http://www.armstat.am> (Հայաստանի Հանրապետության ԱՎԾ կայք):
5. <http://www.mtad.am/hy/> (Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության կայք):

#### **TOURISM AS A MEANS FOR SOCIO-ECONOMIC DEVELOPMENT OF RA MARZES AND COMMUNITIES**

Manasyan G.S.

European University, Yerevan, Republic of Armenia, gor\_manasyan@mail.ru

#### **ANNOTATION**

This article touches the regional development issue in the Republic of Armenia. The author focuses on tourism, with the development of its infrastructure in marzes and communities, as one of the solutions of the issue. The possibility of its socio-economic impact in a positive way has been analyzed by the author; along with providing proposals to implement a number of actions for a development of marzes and communities.